ԱՐԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՍԵՎԾՈՎՅԱՆ ՆԵՂՈՒՑՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԽՈՐՀՐԴԱ - ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1950 -1980 - ական թթ.)

Խորհրդա-թուրքական հարաբերությունների ծայրահեղ լարվածության պայմաններում, պատերազմից հետո[1] ավելի հստակորեն էր ուրվագծվում Թուրքիայի կողմնորոշումը դեպի Միացյալ Նահանգներ, թեև Անգլիայի հետ բարեկամական և ֆորմալ տեսանկյունից նաև դաշնակցային հարաբերությունները ևս պահպանվում էին: Թուրքիան պահպանում և զարգացնում էր ավանդական սերտ հարաբերություններ Գերմանիայի (ԳՖՀ) հետ: Սակայն հետպատերազմական առաջին տարիներին ո՛չ պարտված Գերմանիան և ո՛չ էլ տնտեսական առումով թուլացած Անգլիան չէին կարող Թուրքիային որևէ էական նյութական աջակցություն ցուցաբերել: Այդ առաքելությունը հանձն առավ ԱՄՆ-ը: 1947 թ. մարտին հռչակվեց «Տրումենի դոկտրինան», որտեղ կոմունիստական սպառնալիքով էր հիմնավորում Թուրքիային և Հունաստանին ցուցաբերվող օգնությունը:

«Տրումենի դոկտրինայի» հռչակումից հետո զգալի ծավալներ ընդունեց Թուրքիայի և ԱՄՆ-ի ռազմաքաղաքական համագործակցությունը: Ստորագրվեցին ռազմաքաղաքական բնույթի բազմաթիվ երկկողմանի համաձայնագրեր, այդ թվում Հյուսիսատլանտյան պայմանագրային կազմակերպության (ՆԱՏՕ-ի) շրջանակներում, որին անդամակցել էր ձգտում Թուրքիան՝ հիշյալ կազմակերպության ստեղծման պահից ի վեր: ՆԱՏՕ-ի անդամ մի շարք երկրներ բացասական դիրքորոշում ունեին Հյուսիսատլանտյան դաշինքին Թուրքիայի անդամակցելու հարցում: Սակայն 1950 թ. ամռանից Կորեական պատերազմին Թուրքիայի մասնակցությունը չեզոքացրեց հիշյալ պետությունների արգելքը: 1951 թ. հոկտեմբերի 22-ին ՆԱՏՕ-ի հետ ստորագրվեց համապատասխան արձանագրություն, որի վավերացումից հետո, 1952թ. փետրվարի 18-ին Թուրքիան դարձավ Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ: Հիշյալ իրողության հետ կապված ՆԱՏՕ-ի կանոնադրության մեջ մտցվեց համապատասխան փոփոխություն, որն ընդարձակում էր այդ կազմակերպության աշխարհագրական շրջանակները:

---

[1] Корхмазян Рипсиме. Турция и СССР (Россия): Некоторые провлемы взаимоотношений после Второй Мировой Войны,- Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր XVIII, Երեւան, 1999, էջ 5-15.

Ինքնին Հյուսիսատլանտյան պայմանագրային կազմակերպությանն անդամակցելու Թուրքիայի մտադրություններն անհանգստություն առաջ բերեցին Խորհրդային Միության ղեկավարության շրջանում: 1951թ. նոյեմբերի 3-ին հետևեց Խ. Միության կտրուկ արձագանքը՝ պաշտոնական հայտարարության ձևով: Ի պատասխան՝ թուրքական դիվանագիտությունը զարգացնում էր այն միտքը, թե 1945 թ. խորհրդային տարածքային հավակնությունները հանդիսացան արևմտյան տերությունների հետ Թուրքիայի ռազմաքաղաքական համագործակցությունը խթանող հիմնական գործոնը: Թուրքական կողմն ակնարկում էր, որ խորհրդա-թուրքական հարաբերությունների բարելավման տեսանկյունից անհրաժեշտ է, որ ԽՍՀՄ-ը պաշտոնապես հրաժարվի իր կողմից առաջ քաշված պահանջներից:

1953թ. մարտին, Ստալինի մահից հետո, Խորհրդային Միության արտաքին քաղաքականության մեջ տեղ գտան էական փոփոխություններ: Նոր մոտեցումներ դրսևորվեցին նաև խորհրդա-թուրքական հարաբերություններում:

1953 թ. մայիսի 30-ին, ընդունելով ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Ֆ. Հոզարին, Խ. Միության արտաքին գործոց նախարար Վ. Մոլոտովը վերջինիս հանձնեց թուրքական կառավարությանն ուղղված խորհրդային կառավարության նոտան, որում ասվում էր որ «Խորհրդային Միությունը չունի որևէ տարածքային պահանջներ Թուրքիայի նկատմամբ, իսկ ինչ վերաբերվում է Նեղուցների հարցին, ապա խորհրդային կառավարությունը վերանայել է իր նախկին կարծիքն այդ հարցի առնչությամբ և հնարավոր է համարում Նեղուցների կողմից իր անվտանգության ապահովումը՝ թե՛ ԽՍՀՄ-ի, թե Թուրքիայի համար հավասարապես ընդունելի պայմանների հիման վրա»:[2]

Կանցնի ավելի քան տասը տարի, նախքան փոքր ինչ կբարելավվեն խորհրդա-թուրքական հարաբերությունները: Ընդ որում, սկզբնական շրջանում երկու երկրների միջև զարգանում էին հիմնականում տնտեսական հարաբերությունները:

Խորհրդային նոտայի և թուրքական պատասխան նոտայի հրապարակումը պարզություն մտցրեց կողմերի դիրքորոշման մեջ: Թուրքական կողմի պատասխան նոտայում ասվում էր, որ Թուրքական Հանրապետության կառավարությունը բավարարվածությամբ է ընդունում այն հայտարարությունը, որ ԽՍՀՄ-ը չունի տարածքային որևէ պահանջներ Թուրքիայի նկատմամբ, և իր հոգածությունն էր արտահայտում բարիդրացիական հարաբերությունների

[2] „Правда" 19.09.1953.

պահպանման և խաղաղության ու անվտանգության ամրապնդման հարցում: Իսկ ինչ վերաբերում էր սևծովյան նեղուցների հարցին, ապա այդ առիթով ընդգծում էր, որ դա կարգավորվում է Մոնտրեում ընդունված կոնվենցիայի դրույթների համաձայն:[3]

Սակայն, խորհրդային կողմի զիջումներն էական փոփոխություն չմտցրեցին խորհրդա-թուրքական հարաբերություններում: Ավելին, արդեն 1953 թ. հուլիսին դրանք ծայրահեղորեն սրվեցին՝ ի հետևանք Թուրքիայի ՆԱՏՕ-ի գծով դաշնակիցների ռազմանավերի Նեղուցներ կատարվող այցելությունների և այդ առիթով Խորհրդային Միության ներկայացրած հաճախակի բողոքի նոտաների: Անկարայում խորհրդային դեսպանությունն ուշադիր հետևում էր Նեղուցներն այցելող օտարերկրյա ռազմանավերի թվաքանակի մշտական աճին: Խորհրդային դիվանագիտությունը ձգտում էր օգտագործել այս փաստը թուրքական կողմի վրա ճնշում գործադրելու նպատակով, թեև մեղադրել Թուրքիային Մոնտրեի կոնվենցիան խախտելու մեջ Մոսկվան չէր կարող: Թուրքիայի դաշնակիցների նավատորմերի այցերը որակվում էին իբրև «քաղաքավարական այցեր» և սահմանափակվում էին հիմնականում Ստամբուլի նավահանգստով:

Թուրքիայի պետական գործիչները և մամուլը ԽՍՀՄ դիրքորոշումը գնահատեցին իբրև Թուրքիային իր դաշնակիցներից հեռացնելու ձգտում: 1953 թ. նոյեմբերի 1-ին, փորձելով գնահատական տալ խորհրդա-թուրքական հարաբերություններին, Թուրքիայի վարչապետ Ա. Մենդերեսը մեղադրեց Խ. Միությանը ռազմական նախապատրաստություններ տեսնելու և խաղաղասեր երկրներում քայքայիչ գործունեություն տանելու մեջ:[4]

Խորհրդային կառավարությունը հետևողականորեն շարունակում էր Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավման կուրսը և այդ նպատակով գնաց նույնիսկ երկու երկրների միջև հարաբերությունների բարդացման գործում մեղքի սեփական բաժին մեղքի ճանաչմանը: ԽՄԿԿ ԿԿ առաջին քարտուղար Խրուշչովի կարծիքով խորհրդա-թուրքական հարաբերությունների վատացման պատասխանատվության ողջ բեռն ընկնում էր թե՛ Թուրքիայի, թե՛ ԽՍՀՄ-ի ուսերին. «...մեր կողմից նույնպես թույլ են տրվել անտեղի հայտարարություններ, որոնք մթագնել են այդ հարաբերությունները»: Սակայն Խրուշչովը, ոչ առանց հիմքի, նշում էր, որ խորհրդային կողմը քայլեր է ձեռնարկել Թուրքիայի բարեկամական հարաբերությունները

---

[3] АВП РФ. – Ф. 0132. –Оп. 36. – П. 325. – Д. 14. – Л. 204.
[4] АВП РФ. – Ф. 0132. –Оп. 36. – П. 325. – Д. 14. - Л. 324, 325.

վերականգնելու նպատակով, որոնց, սակայն չեն հետեւել թուրք քաղաքական գործիչների պատասխան քայլերը:[5]

Սակայն ոչ այս և ոչ այլ կարգի հայտարարությունները (որոնցից բխում էր, որ Թուրքիայի մասնակցությունը ռազմական բլոկներին չի ընկալվում իբրև արգելք՝ երկու երկրների միջեւ հարաբերությունների բարելավման համար) չէին ունենում սպասված ներգործությունը: Ավելին, Թուրքիայում առաջ քաշվեց այն թեզը, որ երկիրը կարող է գնալ Խորհրդային Միության հետ հարաբերությունների բարելավման միայն Խորհրդային Միության և մյուս մեծ տերությունների միջև վստահության մթնոլորտի ստեղծման դեպքում: Դրական միտումը երկկողմ հարաբերություններում նկատելի դարձավ 1960-ական թվականների ընթացքում: 1960 թ. գարնանը Խորհրդային Միության եւ Թուրքիայի կառավարությունների միջեւ ծեռք բերվեց համաձայնություն կառավարության ղեկավարների փոխադարձ այցելությունների վերաբերյալ: Դրա իրագործումը, սակայն, ձգձգվեց, 1960 թ. մայիսի 27-ին Թուրքիայում տեղի ունեցավ պետական հեղաշրջում: Իշխանությունն անցավ զինվորականության կազմավորված Ազգային Միասնության Կոմիտեին՝ պետական իշխանության բարձրագույն մարմնին և վերջինիս կողմից նշանակված կառավարությանը: Սակայն հեղաշրջումը չուղեկցվեց արտաքին քաղաքականության բնագավառում լուրջ փոփոխություններով: 1960 թ. հունիս-հուլիս ամիսներին ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի նախագահ Ն. Ս. Խրուշչովը և Թուրքիայի վարչապետ գեներալ Ջ. Գյուրսելն ուղերձներ փոխանակեցին, որտեղ պատրաստակամություն էին հայտնում զարգացնելու երկկողմանի հարաբերությունները: Մասնավորապես Գյուրսելը նույնիսկ նշում էր, որ Թուրքիայի դաշինքների քաղաքականությունը համատեղելի է խորհրդա-թուրքական բարիդրացիական հարաբերությունների հետ:[6] Սակայն թուրքական կառավարության ծրագրային փաստաթղթերում խոսվում էր առաջին հերթին Թուրքիայի համար ՆԱՏՕ-ի և ՍԵՆՏՕ-ի կարեւորության, ինչպես նաև դաշնակիցների, հատկապես ԱՄՆ-ի հետ Թուրքիայի բարեկամական կապերը զարգացնելու անհրաժեշտության մասին: Ճիշտ է, խոսվում էր նաև Խ. Միության հետ հարաբերությունների զարգացման ձգտումների մասին, բայց դրանց իրագործման ճանապարհին նկատելի էր Թուրքիայի զգուշավորությունը: Ձեռնարկվեցին որոշակի կոնկրետ քայլեր: Մասնավորապես, 25

---

[5] Заседания Верховного Совета СССР 4 – го созыва. 4 – я сессия (26 – 29 декабря 1955 г.). Стенографический отчет. –М., 1956 – с. 417.

[6] Váli Ferenc A. The Turkish Straits and NATO - Stanford, 1972. p. 306-308

տարվա ընթացքում առաջին անգամ Թուրքիայի արտգործնախարար Ֆ. Էրքինը 1964 թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 6-ը պաշտոնական այցով ժամանեց Մոսկվա: Թուրքական կողմը դա ներկայացնում էր իբրև իր «բազմակողմանի» քաղաքականության վառ դրսևորում:Սակայն հիմնական խնդիրը Կիպրոսի հարցում ԽՍՀՄ-ի դիրքորոշումն էր: Խ. Միությունը Կիպրոսի անկախության կողմնակից էր: Իսկ դրանից բխում էր, որ Մոսկվան մերժում էր Հունաստանի հետ Կիպրոսի միավորման՝ Էնոսիսի գաղափարը, ինչը համապատասխանում էր Թուրքիայի շահերին: Էրքինի այցի ընթացքում ձեռք բերվեց պայմանավորվածություն երկու երկրների միջև առևտրի և մշակութային համագործակցության զարգացման մասին:[7] Ձեռքբերումներն այնքան էլ զգալի չէին: Սակայն նույնիսկ այդ պայմաններում թուրքական ընդդիմությունը շահարկում էր «ռուսական սպառնալիքի» գործոնը: Այդուհանդերձ Թուրքիայում գտնում են, որ «1960-ական թթ. սկզբներին երկու երկրների միջև հարաբերությունները բարելավվում էին և Թուրքիան ստանում էր էական ռուսական տնտեսական օգնություն՝ ծանր արդյունաբերության բնագավառում իր ծրագրերի իրագործման համար»:[8] Բանն այն է, որ կառավարական և պառլամենտական պատվիրակությունների փոխադարձ այցելությունների և տնտեսության բնագավառում տեղ գտած շփումների արդյունքում 1967 թ. մարտի 25-ին Մոսկվայում կնքվեց խորհրդա-թուրքական համաձայնագիր, որը նախատեսում էր խորհրդային սարքավորումների և նյութերի մատակարարում Թուրքիային: Խոսքը հիմնականում մետալուրգիական, ալյումինի, նավթավերամշակման և այլ գործարանների մասին էր, որոնք դիտարկվում էին Թուրքիայում իբրև կարեւորագույն օբյեկտներ երկրի տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանի (1968 - 1972 թթ.) իրագործման համար: ԽՍՀՄ-ը Թուրքիային էր մատակարարում էներգակիրներ և տրամադրում վարկեր:[9] Այդուհանդերձ, Թուրքիայի արտաքին տնտեսական կապերի զարգացման բնագավառում գերիշխում էր Ընդհանուր շուկային անդամագրվելու դիրքորոշումը և թուրքական կողմը նախապատվություն էր տալիս արեւմտյան դաշնակիցների օգնությամբ երկրի տնտեսական զարգացումն ապահովելուն:

Սակայն տնտեսական հարաբերությունների բարելավման այս գործընթացը չլուծեց Նեղուցների հարցում եղած հակասությունները: Ավելին,

---

[7] Поихверия Б. М. Внешняя политика Турции в 60-х - начале 80-х годов XX в., М., 1986, сс. 81-84.

[8] Turkey. Almanac. — Ankara, 1995 — p. 186.

[9] Поихверия Б. М նշվ. աշխ.,էջ. 96.

1968 թ. փետրվար-մարտ ամիսներին իրավիճակը սրվեց: Մասնավորապես Նեղուցներով խորհրդային նավերի անցումը Միջերկրական ծով առաջ բերեց Վաշինգտոնի թշնամական արձագանքը: Ուժի ցուցադրման նպատակով Սև ծովում հայտնվեց ամերիկյան ռազմածովային նավատորմիղը, ուժեղացավ ԱՄՆ-ի քաղաքական ճնշումը Թուրքիայի նկատմամբ: Ամերիկյան արձագանքն անսպասելի էր: Ամենայն հավանականությամբ էական դեր ուներ ԱՄՆ-ի մտավախությունը, որ Խորհրդային Միությունը կարող է ընդլայնել իր վերահսկողությունը կիպրական զարգացումների վրա:

1970-ական թթ. Թուրքիայի ՆԱՏՕ-ի դաշնակիցները բարձրացրին Նեղուցներով խորհրդային ավիակիրների անցման անօրինականության հարցը: Նրանք Անկարայի ուշադրությունն էին հրավիրում այն իրողությանը, որ նման անցումները չեն համապատասխանում Մոնտրեի կոնվենցիային:

Խորհրդային ավիակիրների անցումը Նեղուցներով պաշտոնապես կարող էր դիտվել իբրև Մոնտրեի կոնվենցիայով հաստատված սահմանափակումներն անտեսող իրողություն: Երբ կնքվում էր կոնվենցիան, հիրավի, այդօրինակ նավեր չկային: Սակայն ԽՍՀՄ-ը գտավ հիմնավոր բացատրություն՝ ստեղծված իրավիճակը պարզաբանելու համար: Խորհրդային կողմը գտնում էր, որ ավիատար հածանավերի հիմնական նշանակությունը հակառակորդի ռազմաօդային և ստորջրյա ուժերի հնարավոր հարվածներից սեփական նավերի պաշտպանության ապահովումն է:[10] Հետևաբար, հիշյալ կարգի հածանավերի անցումը Նեղուցներով ամենևին չի հակասում Մոնտրեի կոնվենցիային:

1970-ական թթ. սկզբներին Նեղուցներով անցան ավիատար «Մոսկվա» և «Լենինգրադ» հածանավերն, իրենց տախտակամածին ունենալով ռազմական ուղղաթիռներ: Անկարան չդիտարկեց դրանք իբրև ավիակիրներ: 1976թ. հուլիսի 18-ին Նեղուցներով անցավ 37 հազար տոննա ջրատարողություն ունեցող «Կիև» ավիատար հածանավը: Խորհրդային կողմն այն դասել էր հակասուզանավային հածանավերի շարքը: ՆԱՏՕ-ում խորհրդային կողմի նման որակման հետ չհամաձայնեցին: Հետագայում Նեղուցներով անցան ավելի հզոր ավիատար նավեր: Բավարար է նշել, որ 1991թ. դեկտեմբերի 2-ին Էգեյան ծով անցավ 65 հազար տոննա ջրատարողությամբ «Կուզնեցով» հածանավը:

Անկարան հաշտվեց Նեղուցներով խորհրդային ռազմածովային ուժերի հզոր ռազմանավերի անցման անխուսափելիության հետ: Թուրքիան, որին

---

[10] Морской сборник. – 1990. – N 2. – с. 14.

վերապահված է Նեղուցների ռեժիմի մեկնության իրավունքը, չընտրեց բողոքների ճանապարհը, հասկանալով, որ դա բացասաբար կարող է անդրադառնալ երկու երկրների հարաբերությունների վրա:

Թուրքիայի զուսպ վերաբերմունքն ու դիրքորոշումը բացատրվում էր մասնավորապես նրանով, որ ռազմանավերին վերաբերող Մոնտրեի ռեժիմի դրույթները վերջին հաշվով լիովին համապատասխանում էին նրա և իր դաշնակիցների շահերին:

Սա է պատճառը, որ ոչ Թուրքիան, ոչ էլ նրա դաշնակիցներն առաջ չէին քաշում Մոնտրեի կոնվենցիան վերանայելու հարցը: Ճիշտ է, 1982 թ. մայիսին Թուրքիան որոշակի փոփոխություններ մտցրեց Բոսֆորով նավագնացության կանոնակարգում, իսկ նույն թվի նոյեմբերին կտրուկ ավելացրեց նեղուցներով անցման համար գանձման վճարները, սակայն հիշյալ քայլերն ամենևին չէին կարող գնահատվել իբրև Մոնտրեի կոնվենցիայի դրույթներին լրջորոն հակասող ձեռնարկումներ:

Միայն Սառը պատերազմից հետո՝ 1990-ական թթ. կեսերին Ռուսաստանի և Թուրքիայի միջև ծագեցին տարաձայնություններ՝ կապված Թուրքիայի կողմից 1994 թ. հուլիսի 1-ին Նեղուցների և Մարմարե ծովի գոտում նավագնացության նոր կանոնակարգը շրջանառության մեջ դնելու իրողության հետ:[11] 1994 թ. նոր կանոնակարգն էականորեն խստացնում էր Նեղուցներով անցման կարգը:

1994թ. Նեղուցներում նավագնացության վերաբերյալ նոր կանոնակարգը բացասաբար ընդունեց պաշտոնական Մոսկվան: 1995 թ. նոյեմբերին ձեռք բերված ռուս-թուրքական համաձայնությունը ենթադրում էր, որ ռուսական կողմը Թուրքիային կփոխանցի հարցերի այն շարքը, որ կարևորում է ՄԾԿ լրացուցիչ կանոնների համատեղ մշակման տեսանկյունից: Սակայն լարվածությունը երկկողմանի հարաբերություններում չթուլացավ:[12]

1990-ական թթ. սրված սևծովյան նեղուցների խնդիրը եկավ լրացնելու թուրք-ռուսական հարաբերություններում ի հայտ եկած մի շարք դժվար լուծելի խնդիրների շարքը: Միջպետական հարաբերությունների նման մթնոլորտն ամենևին չէր կարող նպաստել Նեղուցների խնդրի կարգավորմանը:

---

[11] Maritime Traffic regulations for the Turkish Straits and the Marmara Region. – Turkey. Almanac. – Ankara, 1995. – pp. 172 – 185.

[12] Лаврова Т. В. Черноморские проливы. – Ростов-на- Дону, 1997. с. 108 – 109.